# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

## ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան

29.12.2017թ.

ժամը 17:00

**Հանձնաժողովի նախագահ՝** Մարի Սիմոնյան

**Անդամներ՝** Խաչիկ Կիրակոսյան

Ռոմելա Հարությունյան

Մարիաննա Առաքելյան

**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**<u>ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>**

(Մ. Սիմոնյան)

1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**<u>1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.</u>**

(Մ. Սիմոնյան)

1.1 <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

1.2 Քանի որ <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չէին համապատասխանում ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես

գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը /Հավելված 1/, որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը /Հավելված 3/, գնային առաջարկը /Հավելված 4/ և տուժանքի մասին համաձայնագիրը /Հավելված 8/ ստորագրված էին Մելքոնյան Գայանե անվամբ էլեկտրոնային ստորագրությամբ, իսկ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությունը /Հավելված 2/ և մասնակցի իրական շահառուների մասին տվյալները /Հավելված 2.1/ ստորագրված չէին: Հայտում բացակայում է <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Արթուր Բարսեղյանի կողմից Գայանե Մելքոնյանին փաստաթղթերը ստորագրելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը /լիազորագիր/ հանձնաժողովի 28.12.2017թ.-ի թիվ 4 որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցվել էր նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացվել էր <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ն իրավերով սահմանված ժամկետում և կարգով շտկել է անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

| Չափաբաժին | Գնման ենթական ապրանքի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը ՀՀ դրամով | Մասնակիցների անունները | Գնային առաջարկ ՀՀ դրամով | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Պահնորդական ծառայություն | 3960000 | <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ | 4000000 | 800000 | 4800000 |
| | | | <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ | 4800000 | 960000 | 5760000 |

2.1 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը գերազանցում է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնման հայտով սահմանված գինը: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետով հանձնաժողովը որոշեց վերը նշված չափաբաժնի համար 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրել նիստ 2018 թվականի հունվարի 10-ին ժամը 11:30-ին ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում: Բանակցությունների վարման համար սահմանել ժամանակ 10 րոպե:

**<u>4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>**

(Մ. Սիմոնյան)

4.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 2018թ.-ի հունվարի 10-ին ժամը 11:30, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան

Ռ. Հարությունյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան